ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2020թ. N 286-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 34-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 29-ի «Ջերմուկ համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային մշտական հանձնաժողով ստեղծելու և այդ հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 51-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշմամբ հաստատված՝ Ջերմուկ համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպման մշտապես գործող համայնքային հանձնաժողովի անհատական կազմում «Սամվել Մարգարյան» բառերը փոխարինել «Աշոտ Խաչատրյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 նոյեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2020թ. N 285-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «գ» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա՝ **որոշում եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի N 5 բազմաբնակարան շենքի 129,58 քմ մակերեսով բնակարանը ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Կեչուտ, 7-րդ փողոց, 5-րդ շենք N 3 բնակարան:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 նոյեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2020թ. N 284-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԽԱՉԻՁՈՐԻ ՓՈՂՈՑԻ N 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածին և 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 6-ի N 71-Ա որոշումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Խաչիձորի փողոցի N 4/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականության բնակավայրերի նպատակային նշանակությամբ 1000 քմ մակերեսով հողամասի (գործառնական նշանակությունը՝ այլ հողեր, կադաստրային ծածկագիրը՝10-002-0068-0027) նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ՝ սպանդանոց կառուցելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ներկայացնել ՀՀ Կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման՝ տրամադրելով ճարտարապետահատակագծային առաջադրանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 նոյեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2020թ. N 283-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 30-րդ հոդվածի 2-րդ մասով, 40-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, այդ լրացումներն ու փոփոխությունները հաստատելու մասին» N 69-Ն որոշմամբ և հիմք ընդունելով վարչական ղեկավարների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի 2.4 կետը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ, Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն գյուղերի վարչական ղեկավարների հետ կնքված աշխատանքային պայմանագրերին կից հավելվածի 3-րդ կետի «Կատարում է ՏԻՄ օրենքով սահմանված հետևյալ լիազորությունները» բաժնում կատարել հետևյալ լրացումը՝

« Ղեկավարում է բնակավայրի աշխարհազորային պայմանական գումարտակը, որի հրամանատարն է. պայմանական գումարտակի ղեկավարումն իրականացնում է աշխարհազորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:»

2. Վարչական ղեկավարների հետ կնքել աշխատանքային պայմանագրերին կից հավելվածում՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված գործառույթն ավելացնելու վերաբերյալ համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ղեկավարներին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 նոյեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020թ. N 282-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ուղերձը ս/թ նոյեմբերի 13-ից ուսումնական գործընթացը վերսկսելու մասին՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ս/թ նոյեմբերի 13-ից վերսկսել ուսումնական գործընթացը «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ, «Ջերմուկ համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» և «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային ուսումնական կազմակերպություններում:

2. Ջերմուկ համայնքի «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցներին, բացառությամբ կազմակերպության ղեկավարից, հաշվապահից և պահակից, շարունակել համարել պարապուրդի մեջ՝ մինչև ՀՀ Կառավարության կողմից համաֆինանսավորվող՝ Ջերմուկ համայնքում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում մանկապարտեզի շենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ավարտը՝ պարապուրդում գտնվող աշխատակիցների վճարումը կատարելով օրենսդրությանը համապատասխան՝ Ջերմուկի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակով սահմանված աշխատավարձի երկու երրորդի չափով:

3. «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Հովհաննիսյանին՝ հաստատության գործունեությունը կազմակերպել սահմանված հակահամաճարակային կանոնների պահպանմամբ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանի հավելված N 12-ի դրույթների համաձայն:

4. «Ջերմուկ համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» և «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ների տնօրեններ Արմեն Խուրշուդյանին և Գոհար Մանուկյանին՝ հաստատությունների գործունեությունը կազմակերպել սահմանված հակահամաճարակային կանոնների պահպանմամբ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանի հավելված N 18-ի դրույթների համաձայն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 նոյեմբերի 12
Ջերմուկ